— Իմ աղան առաջ Շատախումն էր կենում, երբ ինքը եկաւ, ինձ էլ բերեց իր հետ:

Ես յիշեցրի նրան, որ կրակը պատրաստ է, ժամանակ է սրճամանը դնել կրակի վրայ: Նա աղիւսի երկու կտորներ դրեց կրակի այս եւ այն կողմերը եւ, սրճամանը ջրով լցնելով, դրեց նրանց վրայ, եւ դարձեալ մօտեցաւ ինձ:

— Քո աղան լաւ՞ մարդ է, — հարցրի նրանից:

— Եթէ վատ լինէր, մօտը կը կենայի՞, — պատասխանեց նա՝ իմ հարցմունքի վրայ զարմանալով: — Եթէ հայրս էլ վատ լինէր, մօտը չէի կենալ:

— Քեզ չի՞ նեղացնում:

— Ինչո՞ւ պէտք է նեղացնէ: Մի այնպիսի լաւ մարդ է, եթէ տամ կուտէ, եթէ չտամ, ձայն չի հանի: Հիմա եթէ ուզենամ, սուրճը չեմ տանի: Նա չի բարկանայ:

— Բայց դու էլ պէտք է այնպէս անես, որ նա չբարկանայ: Այդ լաւ չէ:

— Գիտեմ, որ այդ լաւ չէ: Ես էլ միշտ այնպէս եմ անում, որ նա չբարկանայ: Ամէն բան իմ ձեռքումն է: Փողը սեղանի վրայ դրած է, ինչքան որ կամենամ, կոէր առնեմ. նա չի հարցնի, թէ ի՞նչ արեցիր:

— Ի հարկէ, դու նրա փողը խօ քեզ համար չե՞ս վեր առնի:

— Ի հարկէ չեմ վեր առնի: Եթէ նա չէ հարցնում, աստուած խօ մի օր կհարցնէ: — Երբ որ հազում է, իմ սիրտը կրակ է լցւում. շատ է հազում, չեմ իմանում, ինչո՞ւ է այնքան հազում նա...

Վերջին խօսքերի միջոցին նրա ուժեղ ձայնը դողաց, եւ մատներով սրբեց աչքերը: Երեւում էր, որ այդ խենթը սիրում էր իր պարոնին: Ես նրան յիշեցրի, որ ջուրը եփ է գալիս: Նա մօտեցաւ վառարանին, սրճամանի խուփը վեր առեց եւ, մի ձեռքով բռնելով նրա կոթից, միւս ձեռքով սկսեց ծեծած ղահոէ ածել եռացող ջրի մէջ, որ իսկոյն փրփրեց: Յետոյ դրեց սրճամանը կրակից փոքր-ինչ հեռու, որ հանգստանայ, եւ սկսեց ֆինջանները մաքրել:

Ես զարմանում էի, թէ ինչպէս չէր հետաքրքրւում հարցնել ինձանից, թէ ես ո՞վ եմ, որտեղի՞ց եմ եկել, կամ ինչպէ՞ս յայտնուեցայ նրա սենեակում: Նա այնպէս էր վարւում ինձ հետ, որպէս թէ ես նրա վաղեմի ծանօթը լինէի:

— Ես այստեղ պէտք է մնամ, քո պարոնի մօտ, — ասացի նրան:

Նա ուրախացաւ:

— Ի՞նչ պէտք է շինես, — հարցրեց, թողնելով ֆինջանները եւ մօտենալով ինձ:

— Պէտք է կարդալ սովորեմ: